Աշխատանքի ծածկագիր 4478

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 16.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Ա. Մելիքսեթյանի
Հ. Մանուկյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել է տարբերակ 1-ի նյութական իրավունքի բաժնի 18.35-րդ , 17"33-րդ 24"45-րդ, 4"9-րդ, 15"31-րդ, 5"10-րդ, 9"17-րդ, 1"2-րդ հարցերը

35-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի կողմից ներկայացված հիմնավորումները խնդրում առկա պայմանների անբավարարության պարագայում ողջամիտ են և ընդունելի հանձնաժողովի համար, հետևաբար տրվում է 1 մավոր:*

33-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի վերլուծությունը խարդախության մասին չեն բխում քրեական օրենսդրության դրույթների ճիշտ վերլուծությունից: Պաշտոնատար անձին փոխանցվող գումարի մի մասը վերցնելը չի վկայում խարդախության հանցակազմի առկայության մասին: Բացի այդ, մեջբերված վճռաբեկ դատարանի դիրքորոշումները կիրառելի չեն սույն դեպքում: Հետևաբար հավակնորդի կողմից պատասխանի այս տարբերակի ընտրությունը և բողոքում ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

45-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի են, ուստի տրվում է 1 միավոր:*

9-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի են, քանզի բխում են հատուկ սուբյեկտով արարքի որակման կանոններից, ուստի հավակնորդին տրվում է 1 միավոր:*

31-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում խնդրում առկա փաստերից, քանզի քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ որևէ հանգամանք առկա չէ: Միևնույն ժամանակ հավակնորդը Գ-ի և Դ-ի արարքները չի քննարկել կաշառք ստանալու և տալու համատեքստում, այն պայմաններում, երբ կաշառքի առարկա կարող են լինել նաև սեքսուալ բնույթի ծառայությունները, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

10-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները կրկնում են ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտած դիրքորոշումները, մյուս կողմից խնդրի պայմանների ոչ հստակությունը թույլ չի տալիս գալ միանշանակ եզրահանգման, ուստի նշվածը մեկնաբանելով հօգուտ հավակնորդի , տրվում է 1 միավոր:*

17-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում քրեական օրենսդրության դրույթների ճիշտ մեկնաբանությունից, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի վերաբերելի նախադեպային որոշումներից: Իսկ ինչ վերաբերում է այն փաստարկին, որ բոլոր տարբերակները սխալ են, ապա հավակնորդը իր գնահատմամբ սխալ պատասխանների պարագայն չի ընտրել ճիշտ պատասխանին առավել մոտը, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

2-***րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի են, ուստի տրվում է 1 միավոր:*

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ***4478*** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն, նյութական իրավունքից ստացված 22 միավորը բարձրացնել 5 միավորով՝ արդյունքում արձանագրել 27 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ _____ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ _____ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

_____ Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ